րութիւնը: Ինչե՞ր ասէք այնտեղ չկային: Ինչ որ մի անգամ որոնոել էին Վանայ շրջակայքում կամ նրա աւերակների մէջ, հաւաքել էին այնտեղ: Մի տեղ, փոքրիկ գզրոցներում, որոնց վերեւի երեսները ծածկուած էր ապակիով, դասաւորած էին զանազան հին դրամներ: Մի տեղ, նոյնպիսի գզրոցներում, կային զանազան կանացի զարդեր, որպիսիք են՝ ականջի օղեր, ապարանջաններ, հուլունքներ եւ այլն: Մի այլ տեղ կային հնադարեան զէնքեր, պղնձեայ ծանր վահաններ, սեպաձեւ արձանագրութիւններով եւ առասպելական դրոշմուածներով զարդարած, նիզակների եւ նետերի ծայրեր, տապարներ, սաղաւարտների եւ զրահների կտորներ, բոլորը պղնձից: Այդ բոլոր հնութիւններից իմ ուշադրութիւնը գրաւեցին երկու փոքրիկ արձաններ միայն, որոնցից մէկը պատուած էր ոսկով եւ ներկայացնում էր մի դեռահաս կնոջ: Նա այնքան գեղեցիկ էր, որ ես պատրաստ էի ծունր իջնել եւ երկրպագել նրան: Երբ իմ հոգեզմայլութիւնը յայտնեցի, Հայրիկը ծիծաղելով ասաց.

— Մեզ եւս մի ժամանակ մեղադրում էին այդ մեղքի մէջ:

— Ինչպէ՞ս, — հարցրեց Ասլանը:

Հայրիկը պատմեց մի քանի հետաքրքիր անցքեր, թէ որքա՜ն անախորժութիւնների է պատահել թանգարանի պատճառով: Թանգարանը շինում է գլխաւորապէս այն նպատակներով, որ այնտեղ հետզհետէ հաւաքեն բոլոր հնութիւնները, որոնք խիստ յաճախ գտնում են Վանայ շրջակայքում, եւ ժողովուրդը, նրանց նշանակութեանը չհասկանալով ոչնչացնում է: Օրինակ, պատահել էին այսպիսի դէպքեր. մի գիւղացի գտել էր մի մեհեանի երկաթեայ զոհարանի մի մասը, տարել էր դարբնի մօտ, կոտրել էր տոել եւ իր համար արօրի խոփ էր պատրաստել: Մի այլ գիւղացի գտել էր Սենեքերիմ թագաւորի փղոսկրեայ գահի առաջին ոտները, խիստ չնչին արժէքով վաճառել էր մի զինագործի, որը գնել էր խենջարի կոթեր շինելու համար: Մի քանի տարի առաջ միանգամից գտնւում են այն երկու արձանները, որ մենք տեսանք թանգարանում: Հայրիկը մեծ դժուարութեամբ կարողանում է ազատել այդ գեղեցիկ հնութիւնները ռամկի մոլեռանդութիւնից. «կուռքե՞ր են» ասելով, ամէն կողմից հաւաքւում են եւ կամենում են փշրել: Նրանցից մէկը յայտնի չէր, թէ ի՞նչ աստուածութիւն է ներկայացնում, իսկ միւսը՝ այն դեռահաս դիցուհին, որի գիսակների մէջ փայլում էր մի ճաճանչաւոր աստղ, դա կարծւում է, թէ պէտք է Վասպուրականի տիկինը՝ Աստղիկը լինի: Արձանները տեղաւորում են թանգարանի այն մասում, ուր աւելի լոյս կար եւ որտեղ գրած էր մի հին աստուածամօր պատկեր: Անցնում են մի քանի օրեր, յանկարծ զայրացած խուժանը յարձակւում է վանքի վրայ, փոքր է մնում, որ կործանէ թանգարանը եւ ոչնչացնէ ամէն ինչ: Հայրիկի երկար աղաչանքնե-